ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«24» 01 2022թ. N 20/73

«ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է. Փոթոյանին
ք. Երևան, Աբովյան 23

Հարգելի պարոն Փոթոյան

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Գնորդ) և «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև ՀՀ ԱԱԾ կարիքների համար Դեղորայքի ձեռքբերման համար 2021 թվականի հունվարի 26-ին կնքված թիվ ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ԴԵՂՈՐԱՅՔ/2 ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) և դրա հիման վրա 15.02.2021թ. կնքված N 1 Համաձայնագրի համաձայն «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն պարտավոր էր ՀՀ ԱԱԾ-ին մինչև 2021 թվականի դեկտեմբերի 15-ը ներառյալ մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակները նշված քանակներով՝

Չափաբաժնի համարը	Ապրանքի անվանումը	Չ/մ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Մատակարարման ժամանակացույց 4-ին եռամսյակ, բայց ոչ ուշ քան 15.12.2021թ.	Չմատակարարված քանակ	Գումար /ՀՀ դրամ/ 4-րդ եռամսյակ
31	Կարվեդիլոլ C07AG02	հատ	18,50	800	14800	400	400	7400
32	Կարվեդիլոլ C07AG02	հատ	23,90	800	19120	400	400	9560
	Ընդամենը				**33920**			**16960**

Հաշվի առնելով նշված ցանկով նախատեսված քանակների մասով ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ»

ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ ԱԱԾ-ն 24.01.2022թ-ին միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը և N 1 Համաձայնագիրը վերը նշված ապրանքատեսակների մասով:

Տեղեկացնում եմ, որ «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն՝ պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 93.28 (իննսուներեք դրամ, քսանութ լումա) ՀՀ դրամ՝ որպես տույժ և տուգանք՝ Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 և 900008000664 հաշվեհամարներին ենթակա են գանձման համապատասխանաբար 1696,0 (հազար վեց հարյուր իննսունվեց դրամ) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և 2544 (երկու հազար հինգ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ որակավորման ապահովում:

Հարգանքով՝

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ